«ՆԷԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ (ՀՎՀՀ 01829736)
ք. Բերդ, Աբովյան 51 փող.
էլ. հասցե՝ hovhannisyan.edmond@inbox.ru

ԾԱՆՈՒՑՈՒՄ
Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Զինառ ՓԲԸ-ի և «ՆԷԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի միջև 21 մարտի 2023թ.-ին կնքված թիվ ԶԻՆԱՌ-ԷԱՃԱՊՁԲ-ՏՆՏ-23/03-7 ծածկագրով տնտեսական, սանիհիգիենիկ և լվացքի միրոցների ձեռք բերման գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում «ՆԷԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն ստանձնած պարտավորությունները, մասնավորապես 2023 թվականի մայիսի 16-ին գրությամբ հայտնել է, որ չի կատարելու պայմանագրով սահմանված հետագա մատակարարումները:

Համաձայն Պայմանագրի 8.11-րդ կետի Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը՝ Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով ամբողջությամբ կամ ***մասնակի միակողմանի*** լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ.-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետը և Պայմանագրի 8.11-րդ կետը՝ Զինառ ՓԲԸ -ն միակողմանի լուծում է ՀՀ ոստիկանության և «ՆԷԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի միջև 21.03.2023թ.-ին կնքված թիվ ԶԻՆԱՌ-ԷԱՃԱՊՁԲ-ՏՆՏ-23/03-7 ծածկագրով Պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրվանից:

«ՆԷԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին տրվում է 10 օրացուցային օր տուժանքով սահմանված գումարները՝ 54000 / հիսունչորս հազար/ ՀՀ դրամ որակավորման ապահովման և 36000 / երեսունվեց հազար/ ՀՀ դրամ պայմանագրի ապահովման գումարները Զինառ ՓԲԸ-ի Ամերիաբանկ ՓԲԸ 1570079822650100 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

Սահմանված ժամկետում գումարները չվճարելու դեպքում «ՆԷԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, ընկերության տվյալները կներկայացվեն լիազոր պետական մարմին, իսկ Մատակարարի կողմից Պայմանագրի շրջանակում ներկայացված տուժանքի մասին համաձայնագրերը՝ պայմանագրի ապահովում և որակավորման ապահովում, սահմանված կարգով, կներկայացվի «Էվոկաբանկ» ՓԲԸ վերոնշյալ գումարները գանձելու և Զինառ ՓԲԸ-ի Ամերիաբանկ ՓԲԸ 1570079822650100 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

ԶԻՆԱՌ» ՓԲԸ-ի տնօրենի
պարտականությունները ժամանակավոր կատարող Ա. Օրդուխանյան

02.06.2023թ.